Հավելված
ՀՀ կառավարության 2023 թվականի
սեպտեմբերի 7-ի N 1523-Լ որոշման

Ապրանքի անվանումը	ԳՄԱ կոդը	Տեխնիկական բնութագիրը	Չափի միավորը
Առնվազն 5 տարի հնացված հայկական կոնյակի սպիրտ	15911100	Առնվազն 5 տարի հնացված հայկական կոնյակի սպիրտ՝ - Էթիլ սպիրտի ծավալային մասը, %-55-72, - Բարձր սպիրտների զանգվածային խտությունը՝ վերահաշվարկած ըստ իզոամիլ սպիրտի, մգ/լ անջուր սպիրտում-1700-5000, - Ալդեհիդների զանգվածային խտությունը՝ վերահաշվարկած ըստ քացախաթթվական ալդեհիդի, մգ/լ անջուր սպիրտում-50-500, - Միջին եթերների զանգվածային խտությունը՝ վերահաշվարկած ըստ քացախաթթվական էթիլ եթերի, մգ/լ անջուր սպիրտում-500-2700, - Ցնդող թթուների զանգվածային խտությունը՝ վերահաշվարկած ըստ քացախաթթվի, մգ/լ անջուր սպիրտում, ոչ ավելի-2000, - Ցնդող միացությունների զանգվածային խտությունը, մգ/լ անջուր սպիրտում, ոչ պակաս-1250, - Ֆուրֆուրոլի զանգվածային խտությունը, մգ/լ անջուր սպիրտում, ոչ ավելի-30, - Պղնձի զանգվածային խտությունը, մգ/լ, ոչ ավելի-8,0, - Ընդհանուր ծծմբի երկօքսիդի զանգվածային խտությունը, մգ/լ, ոչ ավելի-40, - Երկաթի զանգվածային խտությունը, մգ/լ, ոչ ավելի-1,5:	Լիտր (100-տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով)

		Լաբորատոր փորձաքննության եզրակացությունների առկայությունը պարտադիր է: Պարտադիր է նաև ածխածնի, ջրածնի և թթվածնի իզոտոպային բաղադրության և խաղողի հումքով արտադրված լինելու փորձաքննության եզրակացության առկայությունը՝ տրված միջազգային հավատարմագրում ունեցող փորձարկման լաբորատորիայի կողմից: Անվտանգության և զգայորոշման ցուցանիշները՝ ըստ ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի «Հայկական կոնյակների և հայկական կոնյակի սպիրտների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 954-Ն որոշման և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի: **Լրացուցիչ հատուկ պահանջներ՝** - Օտարվող հայկական կոնյակի սպիրտի պահպանումը պետք է իրականացվի օտարողի կողմից, - Օտարվող հայկական կոնյակի սպիրտի գինը պետք է ներառի նմուշների փորձաքննության և իրացրած կոնյակի հետագա պահպանման ծախսերը, - Օտարողը պարտավորվում է կատարել օտարված հայկական կոնյակի սպիրտի քանակին համարժեք քանակությամբ խաղողի մթերումներ՝ 1 կգ-ն առնվազն 110 դրամով: Լրացուցիչ հատուկ պահանջների կատարման հետ կապված հարաբերությունները սահմանվում են օտարողի և գնորդի միջև կնքված պայմանագրով:	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

08.09.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ